

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԵՄՈՒՐՉՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՆԵՐՍԵՍԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՆ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ Ներսիկի Հախվերդյան

տնտեսագիտության թեկնածու
Հրանտ Զավենի Հարությունյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. ապրիլի 11-ին, ժամը 14⁰⁰-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0051, ք.Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մարտի 11-ին:

**008 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ա.Մ.Սուվարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից փուլի կարևոր բնութագրերից մեկը ազգային տնտեսությունների փոխազդեցության ուժեղացումն է, ինչն ամբողջությամբ դրսևորվում է նաև ֆինանսական շուկաների մասով և հիմնականում պայմանավորված լինելով գլոբալացման գործընթացներով՝ ուղեկցվում է ֆինանսական շուկաների ինտեգրմամբ:

Պետության և բանկային համակարգի համագործակցությունը միջազգային ու տարածաշրջանային ֆինանսական կազմակերպությունների հետ ընթանում է միջազգային ֆինանսական և դրամական անկայունության պայմաններում: Դա ֆինանսական համակարգի գլոբալացման գլխավոր առանձնահատկությունն է: Այդ իրավիճակում, յուրաքանչյուր երկրի բանկային համակարգի արդյունավետ գործառնման պայմանները որոշիչ են:

Գոյություն ունեն միջազգային վարկային շուկային բանկային համակարգի ինտեգրման գնահատման մի քանի մոտեցումներ, որոնք տարբեր կողմերից ուսումնասիրում են ինտեգրման գործընթացները, սակայն դրանք զուրկ չեն թերություններից՝ կապված համաշխարհային տնտեսական համակարգի զարգացման ժամանակակից միտումների ոչ լրիվ ուսումնասիրության, ինչպես նաև բանկային գործունեության վրա ունեցած առաձնահատուկ ազդեցության հետ: Այսպես, բավականաչափ ուսումնասիրված չեն այն տնտեսական հարաբերությունները, որոնք առաջանում են գլոբալացման ներկա պայմաններում միջազգային վարկային շուկայի մասնակիցների և այդ շուկային ինտեգրվող առևտրային բանկի միջև: Վերջինս թույլ չի տալիս հայրենական բանկերին արագ և որակյալ ապահովել հաճախորդի յուրաքանչյուր կոնկրետ պահանջը և արդյունավետ զարգացնել միջազգային բիզնեսը: Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, հատկապես կրկնվող ֆինանսական ճգնաժամերը, պահանջում են այլ մոտեցում, որն ավելի համարժեք է տեղի ունեցող գլոբալացման գործընթացներին:

Արդեն իսկ գոյություն ունեցող հետազոտություններում բացահայտված են հայրենական և միջազգային բանկային կապիտալների ինտեգրման ոչ բոլոր ոլորտները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների փոխհարաբերություններին վերաբերող հիմնախնդիրները: Դրանցում բավականաչափ շեշտադրում կատարված չէ փոխատվական կապիտալի ձևավորման տեսական և գործնական հիմնախնդիրների և ֆինանսական շուկայի հատվածների գործունեության առանձնահատկությունների վրա, ինչպես նաև բացակայում է միջազգային վարկային շուկայի մեկնաբանման միասնական հայեցակարգային մոտեցումը:

Բացի այդ, այսօր միջազգային վարկային շուկան նոր որակներ է դրսևորում: Այն խախտել է կապը ավանդական բանկային համակարգի հետ. ավանդների միջոցով վարկային ռեսուրսներ ձևավորելը դառնում է պակաս կարևոր:

Միազգային վարկային շուկան, առաջին հայացքից, ոչնչով չապահովված միջոցներով գերիրացվելիության միտումներ է դրսևորում: Եվ այն գերիվկային է:

Ուստի, հետազոտության **արդիականությունն ու հրատապությունը** կայանում է նրանում, թե նման պայմաններում ինչ վարք պետք է դրսևորի ազգային բանկային համակարգը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել միջազգային վարկային շուկային ինտեգրման տեսական և գործնական հիմնախնդիրները և բացահայտել այդ շուկային ՀՀ առևտրային բանկերի արդյունավետ ինտեգրման հնարավորությունները (կամ ուղիները):

Դրված նպատակին համաձայն համար ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել բանկային համակարգի զարգացման գործընթացները և բացահայտել միջազգային բանկային համակարգին ինտեգրման առկա ձևերն ու եղանակները,
- Ուսումնասիրել միջազգային կլանումների և միաձուլումների գործընթացների հիմնական միտումները և զարգացման հեռանկարները,
- Ուսումնասիրել միջազգային բանկային ծառայությունների զարգացման միտումները համաշխարհային ֆինանսական համակարգի ենթատեքստում և այդ համակարգին ինտեգրվող բանկի տեսանկյունից,
- Ուսումնասիրել և գնահատել ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները և միջազգային բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները,
- Բացահայտել և վերլուծել միջազգային վարկային շուկային բանկային ինտեգրման ուղղություններն և առկա մոդելները,
- Ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգում արտասահմանյան կապիտալի առկայության արդյունավետությունը և բացահայտել արտասահմանյան բանկերի՝ հայկական շուկայում ինտեգրման աստիճանը,
- Հետազոտել օտարերկրյա բանկերի՝ զարգացող տնտեսություն ունեցող երկրների բանկային համակարգեր մուտք գործելու եղանակներն ու մեթոդները և գնահատել դրանց կիրառելիության հնարավորությունները ՀՀ առևտրային բանկերի կողմից:

Հետազոտության օբյեկտը ֆինանսական հարաբերությունների համակարգն է պայմանավորված ՀՀ բանկային համակարգի և միջազգային վարկային շուկայի այլ մասնակիցների միջև ինտեգրման գործընթացով, իսկ **հետազոտության առարկան** արտաքին տնտեսական կապերի զարգացման տեսանկյունից դիտարկվող ՀՀ բանկային համակարգում իրականացվող ինտեգրացիոն գործընթացներն են:

Հետազոտության մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան հեղինակների հետազոտությունները, ՀՀ Կենտրոնական բանկի, Համաշխարհային բանկի,

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական տվյալները և հետազոտությունների արդյունքները, ՀՀ կենտրոնական բանկի և արտասահմանյան կենտրոնական բանկերի վերլուծաբանների և ղեկավարների ելույթները, ՀՀ առևտրային բանկերի տվյալները, վերլուծական նյութերը, ինչպես նաև միջազգային և հայրենական նորմատիվաիրավական փաստաթղթերը:

Կիրառվել են վերլուծության և համադրման, համակարգային հետազոտության և համեմատության մեթոդները, վիճակագրության և մաթեմատիկական մոդելավորման մեթոդները:

Արենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ արդյունքներում՝

- Բացահայտվել է ՀՀ առևտրային բանկերի միջազգային մրցունակության վրա մակրոտնտեսական մի շարք գործոնների ազդեցությունը, մասնավորապես՝ գնահատվել են վարկերի միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի, ավանդների միջին տոկոսադրույքի և ՍԳԻ-ի, ՀՀ ֆոնդային բորսայում իրականացված օրական ինտերվենցիաների և փոխարժեքի միջև կապերը:
- Մշակվել և առաջարկվել է ՀՀ-ում գործող առևտրային բանկերում արտասահմանյան կապիտալի ներդրման արդյունավետության գնահատման մոդել՝ հիմնված շահույթ-կապիտալ, շահույթ-ակտիվներ պարամետրերի վրա, որը բացահայտում է ՀՀ առևտրային բանկերի ինտեգրման հնարավորություններն ու նպատակահարմարությունը:
- Մշակվել և առաջարկվել է առևտրային բանկի միջազգային ինտեգրման ներուժի գնահատման նոր մեթոդիկա և ամփոփ ցուցանիշ, որը հիմնված է 4 խումբ՝ ներքին քանակական, ներքին որակական, արտաքին քանակական և արտաքին որակական ցուցանիշների հաշվարկման վրա (այս խմբերի ցուցանիշներից յուրաքանչյուրի գնահատումների արժեքներով (միջին թվաբանականով) հաշվարկվում է ամփոփ ցուցանիշ), բացահայտում է ինտեգրվող սուբյեկտների կապը և հնարավորություն է տալիս դինամիկայի մեջ գնահատել և վերահսկել բանկի ինտեգրման միջոցառումների արդյունքները:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ մշակվել է միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման ներուժի գնահատման մեթոդիկա, որի հիմքում ընկած է քանակական և որակական ցուցանիշների հիման վրա ձևավորված ընդհանրական ցուցանիշը: Բացի այդ, առանձնացվել են ՀՀ առևտրային բանկերի միջազգային ինտեգրման տարբեր ուղղություններ ու ձևեր և վեր հանվել հիմնական առավելություններն ու թերությունները: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինչպես ՀՀ ԿԲ, այնպես էլ առևտրային բանկերի կողմից:

Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտությունում տեղ գտած մոտեցումներն ու սկզբունքները քննարկվել են ՀՀ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի տնտեսագիտության և

կառավարման դեպարտամենտի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 6 գիտական հոդվածներում:

Արենախոսության ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և 8 հավելվածներից: Այն պարունակում է 22 աղյուսակ և 13 զծապատկեր: Շարադրանքի ընդհանուր ծավալն առանց հավելվածների կազմում է 160 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, տրվել են տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են ատենախոսության գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը, ներկայացվել են հետազոտության արդյունքների փորձարկումը և հրատարակումները, կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Բանկային համակարգը համաշխարհային տնտեսության զարգացումների համալրեքսպում»** գլխում անդրադարձ է կատարվել բանկային համակարգում գլոբալացման ու ինտեգրման գործընթացներին, միջազգային բանկային ինտեգրումների տեսակներին ու ձևերին՝ առանձնացված անդրադառնալով բանկերի կլանումներին ու միաձուլումներին:

Համաշխարհային տնտեսության զարգացման ամենաբնորոշ գծերից մեկը, որով հենց կարելի է բնութագրել 21-րդ դարի զարգացման հիմնական միտումը, գլոբալացումն է: Ներկայումս ֆինանսական գլոբալացումն այնքան է խորացել և վերազգային բանկերի տնօրինության տակ այնքան խոշոր ֆինանսական ռեսուրսներ են կենտրոնացված, որ դրանք ընդունակ են կարճ ժամանակում փլուզել ցանկացած երկրի տնտեսություն:

Ատենախոսության վերլուծությունների արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ ֆինանսական գլոբալացումից ստացված բարիքներն անհավասարաչափ են բաշխվում ու դրանից ավելի շատ օգուտներ ստանում են զարգացած երկրները:

Գլոբալացումը հանգեցնում է գործունեության շատ ոլորտներում առանձին պետությունների նույնականացման ու միասնականացման: Սակայն համաշխարհային տնտեսությունը ազգային տնտեսությունների պարզ հանրագումար չէ, այլ նոր տնտեսական համալիր է, որը տարբերվում է ազգային տնտեսություններից և զարգանում է իր օրենքներով¹:

Միջազգային ֆինանսական համակարգում ինտեգրման առումով օրինակ, Ա.Ս.Շատրակովը նշում է, որ «միջազգային ֆինանսական համակարգին բանկի ինտեգրացիան այդ համակարգի այլ մասնակիցների հետ մեկ ամբողջություն կազմելն է՝

¹Աղբյուրը՝ Фаминский И. П., «Глобализация – новое качество мировой экономики» // М; Экономика, 2009, стр. 11.

Նրանց միջև առաջացած տնտեսական հարաբերությունների միջոցով բանկի կողմից իր հաճախորդներին որոշակի ծառայություններ տրամադրելիս»²: Բնորոշումը կատարյալ չէ, սակայն դրա արժանիքը կարելի է համարել այն, որ հեղինակը մատնանշում է արդյունքը՝ այն, որ ինտեգրման արդյունքում ձևավորվում է միասնական ամբողջություն:

Տարակարծություններից խուսափելու համար հեղինակը տվել է նաև բանկային համակարգի միջազգային ինտեգրման բնորոշումը, ըստ որի բանկային համակարգի միջազգային ինտեգրացիան միջազգային արժույթաֆինանսական հարաբերություններին հուսալիություն և կայունություն հաղորդելու համար իրականացվող գործունեություն է՝ օտարերկրյա պետությունների շուկաներում դրանց մասնակցության մեծացման միջոցով:

Առաջարկվող սահմանումը հեղինակի կարծիքով թույլ է տալիս առանձնացնել ինտեգրման և՛ գործընթացը, և՛ արդյունքը, ինչպես նաև բնութագրել դիտարկվող գործունեության նպատակաուղղվածությունն ու դիտարկվող հասկացության գլխավոր առանձնահատկությունները.

1. Բանկային համակարգի և վերազգային հաստատությունների և շուկաների միավորման գործընթացի արտացոլումը,

2. Գործունեության բնույթը, որն ուղղված է առանձին բանկի և ազգային ամբողջ բանկային համակարգի զարգացմանը, որպես ինտեգրացիոն գործընթացի արդյունք:

Ատենախոսության շրջանակներում հեղինակը քննարկել ու ներկայացրել է նաև միջազգային բանկային ինտեգրման տեսակները, ձևերը, մակարդակները գլոբալ շուկայում և եզրակացրել, որ ՀՀ-ում արտասահմանյան բանկերի զգալի մասը պասիվ քաղաքականություն վարելով չի ձգտում ընդլայնել ազդեցության ոլորտները:

Հայրենական ֆինանսական կազմակերպությունների՝ միջազգային շուկա դուրս գալու, տեղական շուկա օտարերկրյա հսկայածավալ բանկային կապիտալի մուտք գործելու, տեղական ընկերությունների համար կապիտալի միջազգային շուկայից փոխառություններ ստանալու պայմաններում հայրենական բանկերը կանգնում են երկընտրանքի առաջև՝ կամ դառնալ իսկապես մրցունակ, խոշոր, ունիվերսալ բանկեր, կամ սահմանափակվել տեղի միջին և փոքր բիզնեսի սպասարկմամբ, ավելի գրավիչ հաճախորդներին թողնելով ոչ ռեզիդենտ բանկերի դուստր ինստիտուտներին և դրանց մայր բանկերին:

Այսպիսով, համաշխարհային ֆինանսական համակարգում բանկային համակարգի ինտեգրումն իրենից ներկայացնում է բանկային համակարգի տարրերի (ներառյալ կենտրոնական բանկը) գործունեության ընդլայնման գործընթաց, որը կատարվում է արտասահմանյան պետությունների շուկաներում նրանց մասնակցության ուժեղացմամբ կամ նրանց մուտքով վերազգային տնտեսական կառույցներ, որի նպատակն է հաստատել նոր կապեր կամ զարգացնել արդեն գոյություն ունեցող կապերը ինտեգրման սուբյեկտների միջև վերազգային կարգավորման կամ այլ կարգավորման հիման վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ բանկային ծառայությունները և միջազգային վարկային շուկային ինտեգրման հնարավորությունները»** գլխում վերլուծվել են

²Աղյուցը՝ Шатраков А.С., Комков К. В., Мерсиянов А.А. «Стоимость предприятий при интеграционном процессе» // М; Издательство « Экономика», 2008, стр. 145.

միջազգային բանկային ծառայությունների կառուցվածքն ու զարգացման միտումները: Այդ համատեքստում անդրադարձ է կատարվել նաև ՀՀ առևտրային բանկերի գործունեության բարելավման ու մրցունակության բարձրացման հիմնախնդիրներին և դրանց զարգացման միտումներին:

Ատենախոսության շրջանակներում բանկային ծառայությունների վերլուծությունների արդյունքում առանձնացվել են միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման չորս մակարդակներ՝ սովորական, պարզ, սկզբնական և բարդ, որոնք հնարավորություն են տալիս առավել հեշտ գնահատել առանձին բանկային ծառայությունների, առևտրային բանկերի, ազգային բանկային համակարգերի գլոբալ շուկային ինտեգրման աստիճանը:

Միջազգային ինտեգրման արդյունքները, դրա ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալու համար ատենախոսության մեջ հեղինակը գնահատել է ՀՀ բանկային համակարգի ու առանձին ֆինանսական ազդակների ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների ու դրանց դինամիկայի վրա:

Շեղիների կողմից դիտարկվել են ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեքի եռամսյակային ցուցանիշները 2004-2014 թթ. համար և ֆոնդային բորսայում իրականացված օրական ինտերվենցիաները, որոնց հիման վրա իրականացված հաշվարկները (տե՛ս աղյուսակ աղյուսակ 1-ը) ցույց են տալիս, որ 2004-2014 թթ. դոլար/դրամ փոխարժեքի տատանման դինամիկան պայմանավորված չէ մակրոտնտեսական ցուցանիշներով և իր վրա չի կրում երկարաժամկետ ազդեցության գործոնների ազդեցությունը: ՀՀ ֆոնդային բորսայում տեղի ունեցած ինտերվենցիաների և փոխարժեքի միջև ռեգրեսիոն հավասարման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալից են: Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, վերը նշված ժամանակահատվածում, ամեն օր, յուրաքանչյուր լրացուցիչ մեկ միլիոն ԱՄՆ դոլարի ինտերվենցիան կարող է հանգեցնել դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորման 2.42 դրամի չափով:

Աղյուսակ 1

ՀՀ ֆոնդային բորսայում իրականացված օրական ինտերվենցիաների և փոխարժեքի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները³

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Ինտերվենցիա	-0.00000242	3.31E-07	-7.321969	0.0000
Ազատ անդամ	359.1336	2.674446	134.2834	0.0000
R ²	0.177749			

Այս տեսանկյունից դիտարկվել են նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքի, տրամադրված վարկերի մեծության, դրանց տոկոսադրույքների, ներգրավված

³Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից Eviews5 ծրագրային փաթեթի օգնությամբ՝ հիմք ընդունելով 2004-2014 թթ. համար ՀՀ դրամ/դոլար փոխարժեքի եռամսյակային ցուցանիշները և ֆոնդային բորսայում իրականացված օրական ինտերվենցիաների ծավալները:

ավանդների ու դրանց տոկոսադրույքների ազդեցությունները, և ստացվել է բավականին հետաքրքիր պատկեր. վարկերի տոկոսադրույքների ու սպառողական գների ինդեքսի միջև կապը վիճակագրորեն նշանակալի արդյունք չի գրանցել, ինչը նշանակում է, որ դիտարկվող ժամանակահատվածում վարկերի տոկոսադրույքների փոփոխությունը պայմանավորված չէ սպառողական գների ինդեքսի փոփոխությամբ (տե՛ս աղյուսակ 2-ը): Նմանատիպ կապի բացակայություն է գրանցվել նաև նույն 2000-2014 թթ. ժամանակահատվածում ավանդների միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի փոփոխության համար (տե՛ս աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 2

Տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները⁴

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	0.062300	0.069215	0.900091	0.3718
Ազատ անդամ	17.48880	0.139020	125.8010	0.0000
R ²	0.013776			

Աղյուսակ 3

Ավանդների միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	-0.127960	0.088002	-1.454047	0.1513
Ազատ անդամ	6.741580	0.176755	38.14084	0.0000
R ²	0.035171			

Վերլուծության արդյունքում հեղինակը նշում է, որ բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքի աճի դեպքում բանկերի կողմից տրամադրվող վարկերի ծավալները նվազել են, բանկային ավանդների տոկոսադրույքի միջին արժեքը համեմատաբար աճել է, ինչի արդյունքում ավանդների ծավալը բանկերում ևս աճել է: Բիզնես վարկերի և ֆիզիկական անձանց տրվող վարկերի միջին տոկոսադրույքի կապը ցույց է տվել, որ վարկերի միջին տոկոսադրույքը 1%-ով ավելացնելու դեպքում ձեռնարկություններին տրամադրվող վարկերի ծավալը նվազում է 1.4 մլրդ. դրամով (տե՛ս աղյուսակ 4-ը):

Իսկ ձեռնարկություններին տրամադրվող վարկերի և դրանց թողարկած արդյունաբերական արտադրանքի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման

⁴Այս և հաջորդող հաշվարկները կատարվել են Eviews ծրագրային փաթեթի օգնությամբ՝ հիմք ընդունելով համապատասխան ցուցանիշների 2004-2014 թթ. տվյալները:

արդյունքները վկայել են այն մասին, որ ձեռնարկություններին տրամադրվող յուրաքանչյուր լրացուցիչ 1 մլն. դրամ վարկի դիմաց արդյունաբերական արտադրանքն աճում է 0.88 մլն. դրամով (տե՛ս աղյուսակ 5-ը), ինչից հեղինակը հետևություն է արել, որ դիտարկվող ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեության վարկավորումը Հայաստանում արդյունավետ չի եղել: Արտահանման ծավալների և արդյունաբերական արտադրանքի, տնտեսական աճի տեմպերի և տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի կապերը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները վիճակագրորեն նշանակալից չեն:

Աղյուսակ 4

Ձեռնարկություններին տրամադրվող վարկերի և վարկերի միջին տոկոսադրույքի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	-1440.693	613.2105	-2.349427	0.0222
Ազատ անդամ	26901.14	10777.40	2.496070	0.0154
R ²	0.086899			

Աղյուսակ 5

Արդյունաբերական արտադրանքի և ձեռնարկություններին տրամադրվող վարկերի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները


Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	0.879775	0.204625	4.299450	0.0001
Ազատ անդամ	55680.75	982.4263	56.67677	0.0000
R ²	0.241684			

Հեղինակն առանձնացնում է, որ միջազգային վարկային շուկային ՀՀ բանկային համակարգի ինտեգրման համար կարևորագույն չափանիշ է նաև տվյալ երկրի արտաքին պարտքի բեռը: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա պետք է նշել, որ սահմանված է, որ մեր երկրում արտաքին պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50%-ը:

Ակնհայտ է, որ ՀՀ-ում արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն աստիճանաբար մոտենում է 50% մակարդակին (տե՛ս գծապատկեր 1-ը), որը կարող է բացասաբար անդրադառնալ նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից արտաքին ֆինանսական շուկաներից վարկային միջոցների ներգրավման վրա, որն էլ լուրջ խոչընդոտ կարող է հանդիսանալ միջազգային վարկային շուկային ՀՀ բանկային համակարգի արդյունավետ և ինտենսիվ ինտեգրման համար:

Ստացված արդյունքները հեղինակի գնահատմամբ հուսադրող չեն և ՀՀ ֆինանսական համակարգի գործունեությանն առավել ամփոփ գնահատական տալու համար առենախոսության մեջ անդրադարձ է կատարվել նաև բանկային համակարգի մրցունակությանը՝ անդրադառնալով միջազգային վարկանիշային կազմակերպությունների՝ ՀՀ բանկային համակարգի վերաբերյալ գնահատականներին:

Մասնավորապես, Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության գնահատման նպատակով 2012 թ. փետրվար ամսին Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից համատեղ կարգով իրականացվել է ֆինանսական համակարգի գնահատման ծրագիր (FSAP)⁵՝ գնահատելով գործող համակարգի համապատասխանությունը բանկային համակարգի արդյունավետ վերահսկողության հիմնարար սկզբունքներին:




Գծապատկեր 1. Արտաքին պետական պարտք / ՀՆԱ 1997-2015 թթ. ցուցանիշների շարժընթացը⁵

FSAP գնահատման համաձայն ՀՀ ֆինանսական համակարգը մոտ 93%-ով բավարարում էր նշված սկզբունքներին «Ամբողջությամբ» կամ «Հիմնականում» մակարդակով, մինչդեռ նախորդ՝ 2005 թվականին իրականացված գնահատման արդյունքներով⁶ նույն ցուցանիշը կազմում էր 67% (տե՛ս գծապատկեր 2-ը):

⁵Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք, <http://www.armstat.am/am/>

⁶Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք, [http://lnweb90.worldbank.org/FPS/fsapcountrydb.nsf/\(attachmentwebFSA\)/Armenia_FSA_Update.pdf/\\$FILE/Armenia_FSA_Update.pdf](http://lnweb90.worldbank.org/FPS/fsapcountrydb.nsf/(attachmentwebFSA)/Armenia_FSA_Update.pdf/$FILE/Armenia_FSA_Update.pdf)



Գծապատկեր 2. FSAP թիմի եզրակացությունը ֆինանսական համակարգի կայունության վերաբերյալ⁷

Դիտարկվել է նաև 2015թ. «Մուդիզ» վարկանիշային կազմակերպությունը Հայաստանի սուվերեն վարկանիշը փոխել է «կայուն»-ից «բացասականի»: Ընդ որում, եթե «Մուդիզ»-ի գնահատումների դինամիկան դիտարկվում է 2006-2015 թթ. համար, կրկին պատկերը անկում է ցույց տալիս՝ այն էլ գրեթե բոլոր ցուցանիշների գծով⁸:

Այլ կերպ, սա նշանակում է, որ միջպետական ու միջազգային վարկային շուկայում Հայաստանի ու ՀՀ բանկային համակարգի վարկունակության անկում է արձանագրվել: Ընդ որում, քանի որ ՀՀ հիմնական գործընկեր պետություններում ևս արձանագրվել են ցուցանիշների անկումներ, դա նշանակում է, որ փոքր բաց տնտեսություն ունեցող Հայաստանն իր վրա կրում է գործընկեր տնտեսությունների բացասական ազդեցությունը:

Միակողմանի գնահատական չունենալու համար հեղինակը դիտարկել է նաև մեկ այլ հեղինակավոր միջազգային կազմակերպության՝ «ՖԻՐԶ»-ի վարկանիշային գնահատումները, որոնք չնայած նույնական չեն կրկնվում, սակայն պատկերն առանձնապես փոփոխություն չի կրում և կրկին ցուցանիշների անկում է

⁷Գծապատկերը կազմվել է Համաշխարհային բանկի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, հիhttp://lnweb90.worldbank.org/FPS/fsapcountrydb.nsf/FSAFexternalcountryreports# Հայաստանի մասով վերլուծությունը հասանելի է հետևյալ հղումով՝ http://lnweb90.worldbank.org/FPS/fsapcountrydb.nsf/(attachmentwebFSA)/Armenia_Update_FSA.pdf/\$FILE/Armenia_Update_FSA.pdf, pp.5-6.

⁸Սղբյուրը՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք.

https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Moody's_January%202015.pdf

արձանագրվում⁹:

Այս տեսանկյունից հեղինակը կարևորել է նաև բանկային վերահսկողության դերը և ՀՀ բանկային համակարգում միջազգային չափանիշներին համապատասխան վերահսկողության համակարգի առկայությունը՝ դիտարկելով բանկային կարգավորման ու վերահսկողության բազելյան սկզբունքների ներդրման գործընթացը: Այս առումով հեղինակի գնահատմամբ ՀՀ բանկային համակարգում ձևավորվել է մի միջավայր, որտեղ ՀՀ բանկերը իրավական նորմատիվային չափանիշներով համապատասխանում են, սակայն մատուցվող ծառայությունների ու ֆինանսական ներուժի տեսանկյունից բավարար մրցունակ չեն միջազգային շուկայում: Իսկ ՀՀ առանձին առևտրային բանկերը, այդ համակարգի բաղկացուցիչները լինելով, նույնպես դեռևս մրցունակ չեն ու գնում են դեպի խոշորացում (կլանումների ու միաձուլումների), իսկ առանձին ծառայությունների մատուցող կրում են արտաքին միջավայրի ազդեցությունը և լավագույն դեպքում հասցնում են ներմուծել ծառայությունների որոշ տեսակներ:

Ատենախոսությունում այս խնդրի լուծման համար քննարկվում են բանկերի մրցունակության բարձրացման հնարավոր տարբերակներ և ներկայացվում են ծառայությունների տեսակներ (սինդիկացված վարկեր, միջազգային ներդրումային, խորհրդատվական ծառայություններ, հաճախորդի միջազգային առևտրային գործարքների գծով միջազգային բանկային ծառայություններ և այլն) որոնք, սովորաբար, բարձրացնում են բանկերի մրցակցային դիրքերը և բավարարում դինամիկ փոփոխվող բիզնեսի պահանջները: Դրա հետ առնչվող հարցերի համալիրի լուծումը հնարավոր է ՀՀ առևտրային բանկերի՝ միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ տնտեսական հարաբերությունների զարգացման պայմանով:

Ատենախոսության երրորդ՝ **«Բանկային ինտեգրման գործընթացի նախադրյալներն ու կարարելագործման ուղիները ՀՀ-ում»** գլխում քննարկվել ու ներկայացվել են միջազգային վարկային շուկային առևտրային բանկերի ինտեգրման ժամանակակից ուղղությունները, ուսումնասիրվել է ՀՀ առևտրային բանկերում արտասահմանյան կապիտալի ներդրման արդյունավետությունը և մշակվել են ՀՀ առևտրային բանկերի միջազգային գործունեության կատարելագործման ուղիները:

Բանկային ինտեգրման կատարելագործման ենթատեքստում միջազգային բանկային համակարգին ինտեգրվածությանը առավել ամբողջական գնահատական տալու համար ատենախոսության շրջանակներում հիմք են ընդունվել ինտեգրման՝ միջազգային պրակտիկայում հայտնի մոդելները (արդյունաբերական զարգացած երկրի շուկա դուրս գալը, միջազգային մասնաճյուղային ցանցի զարգացման կամ ճապոնական և համատեղ ձեռնարկատիրական), որի արդյունքում էլ անդրադարձ է կատարվել ՀՀ առևտրային բանկերի՝ միջազգային բանկային համակարգին ինտեգրվածությանը: Խնդրի լուծման համար ատենախոսության մեջ կարևորվել է ՀՀ առևտրային բանկերում արտասահմանյան կապիտալի առկայության և ներդրման հարցը: Այս նպատակով

⁹«Ֆիթչ» միջազգային վարկանշային կազմակերպության կողմից Հայաստանին շնորհված սուվերեն վարկանիշը (30.01.2015թ. դրությամբ), աղբյուրը՝ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Fitch_January%202015.pdf, մուտքի ամսաթիվ՝ 25.05.2015թ.)

ատենախոսության շրջանակներում փորձ է արվել գնահատել առևտրային բանկերում կապիտալի և չբաշխված շահույթի, ինչպես նաև ակտիվների ու չբաշխված շահույթի միջև եղած կապը:

Վերլուծության նպատակով 2015 թ. ՀՀ-ում գործող 21 առևտրային բանկերը խմբավորվել են ըստ բանկի կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության առկայության և առանձնացվել են 4 առևտրային բանկեր՝ կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության ուղղակի նշանակալի մասնակցությամբ («Արարատ բանկ», «Բիբլոս բանկ Արմենիա», «Ինեկոբանկ» և «Հայէկոնոմբանկ»), 3 առևտրային բանկեր՝ արևմտյան խոշոր բանկերի ուղղակի նշանակալից մասնակցությամբ («Էյչ Էս Բի Սի բանկ», «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» և «Պրոկրեդիտ բանկ»), 3 առևտրային բանկեր ԵԱՏՄ անդամ-պետությունների կապիտալների մասնակցությամբ («ՎՏԲ Հայաստան բանկ», «Առէքսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» և «ԲՏԱ բանկ») և այս վերջին երեքն ընդգրկող 14 բանկեր տեղական կամ ռուսական կապիտալի մասնակցությամբ:

Այս խմբերից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին վերլուծվել են կապիտալ-շահույթ և ակտիվ-շահույթ կապերը՝ հիմք ընդունելով պանելային մեթոդով հաշվարկման մոդելները, որոնք ունեն հետևյալ տեսքը՝

$$Y = \alpha + \beta * X + \epsilon;$$

որտեղ

Y-ը՝ մոդելի անկախ փոփոխականն է (չբաշխված շահույթ),

X-ը՝ մոդելի կախյալ փոփոխականն է (ակտիվ կամ կապիտալ),

β-ն՝ հաշվարկային գործակիցն է կամ սահմանային հավվածության գործակիցն է, որը ցույց է տալիս, թե այլ հավասար պայմաններում X-ի մեկ միավոր փոփոխման արդյունքում ինչքան միավորով կփոփոխվի Y-ը,

α-ն՝ մոդելի ազատ անդամն է, որը ցույց է տալիս, թե բացի կախյալ փոփոխականներից մոդելի մեջ չընդգրկված մնացած բոլոր հնարավոր փոփոխականները գումարային ինչ ազդեցություն ունեն անկախ փոփոխականի վրա,

ε-ը՝ մոդելի սխալն է կամ մոդելի մնացորդը, որը ցույց է տալիս անկախ փոփոխականի փաստացի և հաշվարկային ցուցանիշների տարբերությունը:

Ընդհանուր առմամբ, գնահատելով 24 մոդել, որոնց հաշվարկային արդյունքները և համապատասխան թեստերի արդյունքները ներկայացված են ատենախոսության մեջ և հավելվածում:

Հաշվարկային արդյունքները ցույց են տալիս, որ հաշվարկում ընդգրկված կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 առևտրային բանկերի բանկերի դեպքում ակտիվը 1000 դրամով ավելացնելու դեպքում նշված բանկերի չբաշխված շահույթը աճում է 1.8 դրամով, իսկ կապիտալը 1000 դրամով ավելացնելու դեպքում՝ 0.8 դրամով (աղյուսակ 6):

Ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի համար հաշվարկված արդյունքներն արտացոլված են աղյուսակ 7-ում:

Հաշվարկային արդյունքները ցույց են տալիս, որ ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 բանկերի դեպքում ակտիվը 1000 դրամով

ավելացնելու դեպքում նշված բանկերի չբաշխված շահույթը աճում է 4.3 դրամով, իսկ կապիտալը 1000 դրամով ավելացնելու դեպքում՝ 41.2 դրամով:

Միայն ռուսական և դազախական կապիտալի վրա գործող ՀՀ 3 առևտրային բանկերի համար համանման ձևով իրականացված հաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ ռուսական և դազախական կապիտալով գործող ՀՀ 3 բանկերի դեպքում ակտիվը 1000 դրամով ավելացնելու դեպքում նշված բանկերի չբաշխված շահույթը աճում է 3.8 դրամով, իսկ կապիտալը 1000 դրամով ավելացնելու դեպքում՝ 30.4 դրամով:

Աղյուսակ 6

Կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 առևտրային բանկերի համար հաշվարկված «ակտիվ-չբաշխված շահույթ» և «կապիտալ-չբաշխված շահույթ» մոդելների հաշվարկային արդյունքները¹⁰

«Ակտիվ-Չբաշխված շահույթ» մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Ակտիվ	0.001809	2.243208	410769.7	2.214058
«Կապիտալ-Չբաշխված շահույթ» մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Կապիտալ	0.000826	2.050934	579831.6	2.877306

Աղյուսակ 7

Ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 առևտրային բանկերի համար հաշվարկված «ակտիվ-չբաշխված շահույթ» և «կապիտալ-չբաշխված շահույթ» մոդելների հաշվարկային արդյունքները

«Ակտիվ-Չբաշխված շահույթ» մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Ակտիվ	0.004396	9.320733	-112076.6	-1.595529
«Կապիտալ-Չբաշխված շահույթ» մոդել				
Կախյալ փոփոխական	Գործակից	Ստյուդենտի բաշխում	Ազատ անդամ	Ստյուդենտի բաշխում
Կապիտալ	0.041201	11.78637	-399681.8	-5.086183

Արդյունքները համադրելով, հեղինակը կատարում է որոշակի եզրակացություններ՝ համաձայն որոնց ռուսական, արաբական կամ տեղական կապիտալի վրա գործող ՀՀ 14 առևտրային բանկերը ավելի արդյունավետ են գործում, քան կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ 7 առևտրային բանկերը:

Նման իրավիճակի պատճառը հեղինակի կարծիքով կայանում է նրանում որ ՀՀ 14 և 7 առևտրային բանկերի համար «կապիտալ/չբաշխված շահույթ» հարաբերակցությունը

¹⁰Այստեղ և հետագայում՝ հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի ակտիվների, կապիտալի և չբաշխված շահույթի եռամսյակային ցուցանիշները 2012-2014 թթ. համար:

հոգուտ 14 բանկերի է ու գերազանցում է 49.88 անգամ, ինչը վկայում է, որ ՀՀ բանկային համակարգում հիմնական վարկավորումը իրականացվել է ոչ թե փոխառու միջոցների, այլ սեփական կապիտալի, սեփական ռեսուրսների հաշվին:

Ամփոփելով կատարված հաշվարկային արդյունքները՝ հեղինակը նշում է, որ նման իրավիճակը երկարաժամկետ հեռանկարում հանգեցնելու է կապիտալում միջազգային ֆինանսական կազմակերպության բաժնեմաս ունեցող ՀՀ բանկերի կլանման կամ միաձուլման: Բացի այդ, հաշվարկների արդյունքները ցույց են տալիս նաև, որ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում համագործակցությունը և բանկային կապիտալում այս միության անդամ երկրների մասնակցությունը ավելի մեծ դրական էֆեկտ է ապահովում, քան միջազգային կազմակերպությունների դեպքում է:

Ասվածի վկայությունն են «Պրոկրեդիտ» բանկի՝ «Ինեկոբանկի» կողմից ձեռքբերման, «ԲՏԱ» բանկի՝ «Հայէկոնոմբանկի» կողմից ձեռքբերման և «Արդշինբանկի» կողմից «Առէքսիմբանկի» ձեռքբերման գործարքները, որոնք լրացուցիչ անգամ հավաստում են մեր կողմից իրականացված հաշվարկների ճշտությունը և ցույց տալիս, որ տեղական կապիտալով բանկերի գործունեությունն ավելի նպաստավոր է, քան արտասահմանյան կամ արտասահմանյան մասնակցությամբ կապիտալով բանկերինը:

Բացի այդ, բանկերի միավորումների կամ ձեռքբերումների հաշվին ավելացնելով կապիտալի մեծությունը՝ լուծվում է նաև Բազել 3-ի պահանջներին համապատասխանեցնելու և հակացիկլային բուֆերներ ստեղծելու միջոցով վարկավորման ծավալները տնտեսական վերելքի շրջանում սահմանափակելու, իսկ տնտեսության անկման պայմաններում լրացուցիչ վարկավորման հնարավորություն ընձեռելու խնդիրը:

ՀՀ առևտրային բանկերի ինտեգրման առավել ամբողջական պատկերը ստանալու համար ատենախոսության մեջ դիտարկվել է նաև առևտրային բանկի միջազգային վարկային շուկային ինտեգրման ներուժի գնահատման գործընթացը, որի շրջանակներում մշակվել և առաջարկվել է ինտեգացիոն գործընթացները բնութագրող ցուցանիշների համակարգ՝ համապատասխան չափանիշներով: Ընդ որում, գնահատելու համար մշակվել են չորս խումբ ցուցանիշներ՝ ներքին քանակական (IQ) , ներքին որակական (IS), արտաքին քանակական (FQ) և արտաքին որակական (FS) ցուցանիշներ: Այս խմբերի ցուցանիշներից յուրաքանչյուրի գնահատումների արժեքներով (միջին թվաբանականով) հաշվարկվում է ընդհանրական ցուցանիշ, որն առաջարկվել է կատարել հետևյալ կերպ.

$$PI = \frac{\sum_{n=1}^{12} IQ_n + \sum_{n=1}^7 IS_n + \sum_{n=1}^3 FQ_n + \sum_{n=1}^3 FS_n}{4}$$

որտեղ PI-ն ինտեգրման ներուժն է:

- մինչև 25 միավոր՝ ցածր ներուժ, անհրաժեշտ է վերացնել որոշակի թերություններ միջազգային ինտեգրացիոն գործընթացներ սկսելուց առաջ,
- 25-50 միավոր՝ միջին ներուժ, բանկը կարող է դուրս գալ միջազգային շուկա, սակայն չունի էական առավելություններ, կպահանջվեն լրացուցիչ ներդրումներ,
- 50-75 միավոր՝ մեծ ներուժ, բանկն ունի բավականին լավ դիրքեր,

- 75-100 միավոր՝ հզոր ներուժ, բանկին անհրաժեշտ է զարգացնել ինտեգրացիոն գործունեությունը՝ օգտվելով իր շահավետ դիրքից:

Առաջարկվող մեթոդիկայի նպատակն է վերլուծել բանկի հնարավորություններն օտարերկրյա շուկաներում իր ներկայության հետ կապված և հանձնարարականներ մշակել այդ գործընթացի հեշտացման համար: Մեթոդիկայից կարող են օգտվել ինչպես բանկի բարձրաստիճան ղեկավարները որպես ներքին օգտվողներ (իրենց դիրքերը վերլուծելիս), այնպես էլ արտաքին օգտվողները (օրինակ՝ պոտենցիալ ներդրողները): Հարկ է նաև նշել, որ առաջարկվող մեթոդիկան կարող է կիրառվել նաև վարկային կազմակերպությունների կողմից:

Առաջարկվող մեթոդիկան մի կողմից պետք է հաշվի առնի, մյուս կողմից՝ սահմանի ինտեգրման համապատասխան տեսակն ու ձևը, ինտեգրացիոն գործընթացների իրականացման փուլերն ու ուղղությունները: Բացի այդ, պետք է նշել, որ ցուցանիշների գնահատման չափանիշների փոփոխությունը թույլ է տալիս հաշվի առնել միջազգային ինտեգրման տեսակի, ձևի և փուլի առանձնահատկությունները:

«Հենտրոնական բանկը կարող է կիրառել նշված մեթոդիկան որպես բանկային համակարգի ինտեգրացիոն գործընթացների կարգավորման գործիք: Տվյալ գործիքի էությունը կայանում է նշված մեթոդիկայով առևտրային բանկի՝ միջազգային վարկային շուկային ինտեգրման ներուժի հաշվարկի մեջ: Մեթոդիկան կարող է դրվել «Հ բանկային համակարգի՝ միջազգային վարկային շուկային ինտեգրման ռազմավարության հիմքում:

Առաջարկվող մեթոդիկան փորձարկելու նպատակով հեղինակի կողմից տրվել է «Անելիք բանկի» գնահատականը, որը կազմել է 39.5 միավոր, և որը համապատասխանում է բանկի ինտեգրման միջին ներուժին: Եվ, չնայած, բանկն ակտիվ գործունեություն է ծավալում արտասահմանում, այնուամենայնիվ, կան ցուցանիշներ, որոնք չեն բավարարում միջազգային շուկա դուրս գալու պահանջներին ու բանկի ինտեգրացիոն դիրքերն ամրապնդելու համար անելիքներ դեռ շատ կան:

Առենախոսության մեջ իրականանացված վերլուծությունների հիման վրա հետազոտության հիմնական արդյունքները ամփոփվել են **եզրակացությունների** տեսքով, որոնք ամփոփ հանգել են հետևյալին.

1. Ուսումնասիրելով գիտական գրականության մեջ տեղ գտած միջազգային ֆինանսական համակարգին բանկի ինտեգրման առումով բազմաթիվ բնորոշումներ և սահմանումներ, ինչպես նաև տարակարծություններից խոսափելու համար առաջարկվում է բանկային համակարգի միջազգային ինտեգրումը ռացիոնալ ձևով սահմանել հետևյալ կերպ. Բանկային համակարգի միջազգային ինտեգրացիան միջազգային արժույթաֆինանսական հարաբերությունների ստեղծմանը նպատակաուղղված և օտարերկրյա պետությունների շուկաներում բանկերի մասնակցության մեծացման միջոցով նոր ինտեգրացիոն հարաբերությունների հաստատմանը գործունեության արդյունավետությունը բարձրացնող գործընթաց է:

2. «Հ բանկային համակարգը միջազգային վարկային շուկայում իր մասնակցության մեծացման համար պետք է առնվազն բավարարի հետևյալ պահանջներին.

- իր բանկային համակարգով և ինստիտուտներով դառնալ արեկվատ

միջազգային պահանջներին,

- ստեղծել երկրի այնպիսի ինստիտուցիոնալ վիճակ, այնպիսի պայմաններ, որ միջազգային խնայողությունները հոսեն դեպի ՀՀ բանկային համակարգ:

Այս ուղղությունների ողջ ծավալով իրականացումը նշանակալիորեն պետք է նպաստի հայրենական բանկերի՝ միջազգային վարկային շուկային ինտեգրմանը: Դրա հետ մեկտեղ, հայրենական բանկերի ամբողջական ինտեգրման հիմնախնդրի լուծման համար առաջարկվում է հետևյալ պայմանների իրականացումը՝

- ՀՀ-ում քաղաքական և տնտեսական կայունության ապահովում, որի բացակայությունը հանդիսանում է հիմնական գործոնը, որն արգելք է հանդիսանում մեր տնտեսության ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը,
- Ֆինանսական կայունության ձեռք բերում և միջտարածաշրջանային դրամավարկային, արժույթային, ֆոնդային համակարգերի զարգացում,
- երկրի բանկային համակարգի հարմարեցումը համաշխարհային արժույթավարկային շուկաների գործունեությանը և միկրոմակարդակով հայրենական բանկերի ինտեգրումը միջազգային վարկային շուկային:

3. Որպես բանկային ինտեգրացիայի դասակարգման լրացուցիչ չափանիշներ աշխատանքում առաջարկվում են ինտեգրման ուղղությունը, բանկային ինտեգրացիոն գործընթացների նախաձեռնողը, ինտեգրացիոն գործընթացների մակարդակը: Բանկային ինտեգրացիայի ձևերից առանձնացվել են 100% օտարերկրյա կանտոնադրական կապիտալով ինքնուրույն բանկերի ստեղծումը, ազգային բանկերի կապիտալներում մասնակցությունը, դուստր բանկերի և մասնաճյուղերի բացումը, բանկի ներկայացուցչությունների աշխատանքների կազմակերպումը, համատեղ ձեռներեցության իրականացումը, ազգամիջյան բանկերի ստեղծումը, թղթակցային հարաբերությունները օտարերկրյա բանկի հետ: Շուկայական տնտեսության պայմաններում ավելի ու ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում կլանման և միաձուլման հետ կապված գործարքները, այդ թվում հենց բանկային ոլորտում:

4. Գլոբալացման ու ինտեգրացիոն գործընթացների խորացման արդյունքում ֆինանսական հատվածում տեղի են ունենում շարունակական կլանումներ ու միաձուլումներ և, ըստ էության, սա նաև կապիտալի խոշորացման մասնավոր դեպք է, որի միտումները նկատվում են նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից ու, ոչ հեռու ապագայում, հեղինակի կարծիքով, ականատես կլինենք նման կլանումների:

5. Միջազգային բանկային ծառայությունների վերլուծությունը թույլ է տալիս համակարգել տնտեսական հարաբերությունները, որոնցում բանկը հանդես է գալիս միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ ըստ ծառայությունների տեսակների և առանձնացնել միջազգային վարկային շուկային բանկի ինտեգրման 4 մակարդակ, որոնք որոշվում են միջազգային բանկային ծառայությունների կոնկրետ խմբով և ամեն մի խմբին բնորոշ տնտեսական հարաբերություններով: Առաջարկվում է դրանք առանձնացնել են որպես սովորական, պարզ, սկզբնական և բարդ մակարդակներ:

6. Ատենախոսության շրջանակներում ՀՀ առևտրային բանկերի միջազգային բանկային ծառայությունների վերլուծությամբ բացահայտվել է միջազգային վարկային շուկային ինտեգրման ավելի բարձր մակարդակների համար բնորոշ միջազգային բանկային ծառայություններ, ինչպիսիք մեր բանկերը դեռևս բավարար չափով չեն տրամադրում, ինչը և որոշում է ՀՀ առևտրային բանկերի միջազգային բանկային ծառայությունների զարգացման հեռանկարը, մասնավորապես՝ կապված առաջատար օտարերկրյա բանկերի հետ միջազգային թղթակցային հարաբերությունների հաստատման, միջազգային առևտրային գործարքների զարգացման համար միջազգային բանկային ծառայությունների տրամադրման, միջազգային ներդրումային բանկային ծառայությունների զարգացման, խոշոր արտահանող ընկերությունների արտաքին արժույթային մուտքերի արժեթղթավորման և այլնի հետ: Այդ նպատակով, ատենախոսության մեջ առաջարկվում է ՀՀ առևտրային բանկերի կազմակերպչական կառուցվածքներում միջազգային բանկային ծառայությունների և օտարերկրյա գործընկերների հետ տնտեսական հարաբերությունների զարգացման համար պատասխանատու ստորաբաժանման ստեղծումը:

7. Առաջարկվում է օգտագործել թղթակցային հարաբերությունների կազմակերպման միջազգային փորձը: Առաջատար օտարերկրյա բանկերը ներկայումս հրաժարվում են բազմաթիվ նոստրո թղթակցային հաշիվներից այլ երկրների բանկերում, քանի որ դա հանգեցնում է գործարքային ծախսերի մեծացմանը: Դա թույլ կտա ՀՀ առևտրային բանկերին մատուցել միջազգային հաշվարկներով ծառայությունների լրիվ ցանկն ավելի բարձր որակական մակարդակով՝ կոնկրետ օտարերկրյա բանկերի հետ համագործակցության ուժեղացման հաշվին: Կարևոր է ՀՀ առևտրային բանկերի կողմից վարկային գծերի բացումը թղթակցային հարաբերությունների շրջանակներում: Դա զգալիորեն կպարզեցնի արտահանման-ներմուծման գործարքների իրականացումը՝ միջազգային վճարահաշվարկային ծառայությունների տրամադրման ժամանակ:

8. Հեռանկարային է հանդիսանում հաճախորդների միջազգային առևտրային գործարքների գծով միջազգային բանկային ծառայությունների տրամադրումը և բանկի հաճախորդների համար բիզնես գործընկերների որոնումը: Արևմտյան բանկային պրակտիկայում նման ստորաբաժանումները կրում են «Trade Promotion Department» անվանումը, որոնց գործունեությունը պայմանավորված է արտաքին տնտեսական հարաբերությունների ընդլայնման գործում հաճախորդների պահանջարկի ուսումնասիրությամբ: Առևտրային գործարքների կազմակերպման միջազգային բանկային ծառայություններ տրամադրելիս մեծ նշանակություն է ձեռք բերում հաճախորդների բիզնեսի սպասարկման խորհրդատվական ծառայությունների մատուցման գծով օտարերկրյա բանկերի փորձը, ինչպիսիք են՝ հաճախորդների արտաքին պայմանագրերի վերլուծությունը, օտարերկրյա բանկերի վարկունակության և ֆինանսական վիճակի վերլուծությունը, հաճախորդների գործարքների կազմակերպման գծով անհատական սխեմաների մշակումը:

9. Միջազգային ներդրումային բանկային ծառայությունների օտարերկրյա փորձի կիրառումը ՀՀ առևտրային բանկերի՝ միջազգային վարկային շուկային ինտեգրման գործընթացի զարգացման առանցքային գործոններից մեկն է: Հեղինակը հեռանկարային է համարել արժեթղթավորման գծով ծառայությունների տրամադրումը, համաշխարհային ֆինանսական շուկաներում ՀՀ առևտրային բանկերի մուրհակների և հաճախորդների բաժնետոմսերի տեղադրման գծով համաշխարհային փորձի օգտագործումը: Տվյալ ծառայությունների յուրացումը թույլ կտա հայրենական բանկերին, մի կողմից, տնտեսական հարաբերություններ հաստատել միջազգային վարկային շուկայի մասնակիցների հետ, իսկ մյուս կողմից՝ լավագույն կերպով բավարարել հաճախորդի ներդրումային պահանջարկը:

10. ՀՀ առևտրային բանկերի ինտեգրման աստիճանը գնահատելու և բանկային ծառայությունների շուկան վերլուծելու համար դիտարկվել է ՀՀ բանկային համակարգի զարգացումը և գնահատվել է ներկա վիճակն ու հիմնական միտումները:

Այս նպատակով դիտարկվել են ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները և գնահատվել է դրանց կապը մակրոտնտեսական ցուցանիշների հետ: Դիտարկվել են ՀՆԱ-ի, առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի, բանկերի կողմից ներգրավված ավանդների, դրանց տոկոսադրույքների, սպառողական գների ինդեքսի և այլ ցուցանիշներ, որոնց կապը ուսումնասիրելուց ակնհայտ է դարձել, որ բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքի աճի դեպքում բանկերի կողմից տրամադրվող վարկերի ծավալները նվազել են, բանկերում պահ տրվող ավանդների տոկոսադրույքի միջին արժեքը համեմատաբար աճել է, ինչի արդյունքում ավանդների ծավալը բանկերում ևս աճել է: Տրամադրված վարկերի և վարկերի միջին տոկոսադրույքի կապի գնահատման արդյունքում պարզ է դարձել, որ վարկերի միջին տոկոսադրույքը 1%-ով ավելացնելու դեպքում ձեռնարկություններին տրամադրվող վարկերի ծավալը նվազում է 1.4 մլրդ. դրամով, իսկ արդյունաբերական արտադրանքի և ձեռնարկություններին տրամադրվող վարկերի կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները վկայում են այն մասին, որ ձեռնարկություններին տրամադրվող յուրաքանչյուր լրացուցիչ 1մլն. դրամ վարկի դիմաց արդյունաբերական արտադրանքը աճում է 0.88 մլն. դրամով: Արդյունքում, կարելի է նշել, որ գործարարության վարկավորումը Հայաստանում արդյունավետ չի եղել: Իսկ առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի, ավանդների միջին տոկոսադրույքի և սպառողական գների ինդեքսի, արտահանման ծավալների և արդյունաբերական արտադրանքի, տնտեսական աճի տեմպերի և տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքի կապերը բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները վիճակագրորեն նշանակալից չէ, ինչը նշանակում է, որ դրանք էական ազդեցություն չունեն:

11. Առաջարկվել են միջազգային ինտեգրման այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝ ինքնուրույն և համանման ինտեգրացիաները, որոնք բացահայտում են ինտեգրման սուբյեկտների կապը: Հայրենական բանկերի միջազգային վարկային շուկային ինտեգրման ժամանակակից մոդելների և ուղղությունների

վերլուծության արդյունքում առանձնացվել են զարգացման 4 հիմնական ուղղություններ և ավելացնել դրանց բանկային ինտեգրացիայի և 2 ուղղություն: Սակայն առևտրային բանկի կողմից ինտեգրման այս կամ այն ուղղության ընտրության անհրաժեշտությունը պետք է հենց սկզբից հիմնալի բանկի կողմից միջազգային ինտեգրման իր հնարավորությունների և պոտենցիալի հստակ տեսլականի վրա, որը պետք է գնահատվի առավելագույնս օբյեկտիվորեն:

12. Միջազգային բանկային և մասնավորապես՝ վարկային համակարգին ՀՀ առևտրային բանկերի ու բանկային համակարգի ինտեգրման հնարավորությունները գնահատելու նպատակով ատենախոսության շրջանակներում դիտարկված միջազգային վարկանիշային գործակալությունների տրված գնահատականները ցույց են տալիս, որ ՀՀ բանկային համակարգը, նույնիսկ երբ արդեն մասամբ ներդրված են Բազել 3-ի սկզբունքները, չունի բավարար մրցունակություն և բավականին դժվար է այդ պայմաններում վարկային միջոցների ներգրավումը:

13. ՀՀ առևտրային բանկերի ինտեգրման հնարավորությունները գնահատելու համար ատենախոսության մեջ ներկայացված մոդելով գնահատվել է արտասահմանյան կապիտալի ներդրման արդյունավետությունը, որի արդյունքում ակնհայտ է դարձել, որ առավել արդյունավետ են աշխատում տեղական և ռուսական կապիտալի մասնակցությամբ առևտրային բանկերը և մեծ է հավանականությունը, որ միջնաժամկետ հատվածում հենց այդ բանկերը կծոպվեն: Մյուս կողմից, նույն գնահատման արդյունքում ակնհայտ է նաև, որ ռուսական կապիտալն աշխատում է բավականին բարձր արդյունավետությամբ ու դա նշանակում է, որ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կապիտալի առավել ազատ տեղաշարժը կարող է առավել մեծ չափով խթանել արդյունավետ բանկային գործունեությունը:

14. Միջազգային վարկային շուկային ՀՀ բանկային համակարգի ինտեգրման մակարդակի բարձրացման կարևորագույն մեխանիզմներից է առևտրային բանկերի կայուն և բարելավված նորմատիվային ցուցանիշների առկայությունը: Այս տեսանկյունից, կարևոր է 2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն շեմի բարձրացումը, որը 5 մլրդ ՀՀ դրամից պետք է դառնա նվազագույնը 30 մլրդ ՀՀ դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ առևտրային բանկերում մեծ է արտասահմանյան կապիտալի առկայությունը, ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է օգտագործել նաև արտահասմանյան ներդրողների՝ արտերկրում ունեցած իրենց տնտեսական կապերը՝ ներգրավելու մատչելի և մրցունակ վարկային ռեսուրսներ:

15. Աշխատանքում մշակված է միջազգային վարկային շուկային առևտրային բանկի ինտեգրման ներուժի գնահատման մեթոդիկա, որը հիմնված է մի շարք ներքին ու արտաքին, քանակական և որակական ցուցանիշների հաշվարկման վրա և թույլ է տալիս գնահատել բանկի ինտեգրացիոն գործընթացները դինամիկայի մեջ: Տվյալ մեթոդիկան կարող է կիրառվել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից որպես բանկային համակարգում ինտեգրացիոն

գործընթացների կարգավորման լրացուցիչ գործիք: Տվյալ գործիքի էությունը կայանում է նշված մեթոդիկայով առևտրային բանկի՝ միջազգային վարկային շուկային ինտեգրման ներուժի հաշվարկի մեջ: Մեթոդիկան կարող է դրվել ՀՀ բանկային համակարգի՝ միջազգային վարկային շուկային ինտեգրման ռազմավարության հիմքում: Ատենախոսությունում մեթոդիկան կիրառվել «Անեյիք Բանկ» ՓԲԸ-ի օրինակով, ցույց է տրվել վերջինիս ինտեգրացիոն ներուժի միջին արժեքը:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Ն. Դեմուրյան, «Բանկային ճգնաժամերի կանխատեսումը բանկային համակարգի մակրոարդյունքի վերլուծության միջոցով» // «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», «Encyclopedia-Armenica», Երևան 2011 թ., #7, էջ 95-102:
2. Ն. Դեմուրյան, «Սինդիկացված վարկավորման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» // «Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, «Լիմուշ», Երևան 2012 թ., 6 (144), էջ 62-63:
3. Ն.Դեմուրյան, «Միջազգային բանկային ծառայությունների զարգացման հնարավորությունները ՀՀ-ում» // «Եվրոպական ակադեմիա, գիտական հոդվածների ժողովածու», «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, Երևան 2013 թ., 2(01), էջ 168-175:
4. Ն.Դեմուրյան «Միջազգային վարկային շուկային առևտրային բանկի ինտեգրման ներուժի գնահատման մեթոդաբանությունը» // «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները» գիտաժողովի նյութերի ժողովածու, Գիրք 2, Եվրասիա միջազգային համալսարան, «Զանգակ-97», Երևան 2013թ., էջ 121-128:
5. Ն.Դեմուրյան, «Արտասահմանյան կապիտալի արդյունավետության գնահատումը ՀՀ առևտրային բանկերում» // «Այլընտրանք» գիտական հանդես, «Լիմուշ», Երևան 2015թ., #4, էջ 33-39:
6. Ն.Դեմուրյան, «ՀՀ առևտրային բանկերի մրցունակության բարձրացման հիմնախնդիրները» // «Այլընտրանք» գիտական հանդես, «Լիմուշ», Երևան 2015 թ., #4, էջ 163-174:

ДЕМУРЧЯН НАРИНЕ НЕРСЕСОВНА

**ПРОБЛЕМЫ ИНТЕГРАЦИИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА В
МЕЖДУНАРОДНЫЙ КРЕДИТНЫЙ РЫНОК**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 – «Международная экономика».

Защита диссертации состоится 11-ого апреля 2017 г., в 14⁰⁰, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике при Российско-Армянском университете по адресу: 0051, г. Ереван, ул. Овсепя Эмина 123.

РЕЗЮМЕ

Одной из важнейших характеристик современного этапа развития мировой экономики является усиление взаимовлияния национальных экономик, что полностью проявляется также по части финансовых рынков, и, будучи, главным образом, обусловленным глобализационными процессами, сопровождается интеграцией финансовых рынков. Интеграционные процессы оказывают существенное влияние главным образом на деятельность национальных банковских систем, интегрирующихся в международный кредитный рынок, что выражается углублением процессов их интеграции в международный кредитный рынок.

В банковской системе РА Центральный банк и коммерческие банки тесно сотрудничают с различными международными структурами и хозяйствующими субъектами иных государств, и в этом контексте необходимо выявить все те проблемы, которые возникают в процессе сотрудничества на местном и международном уровнях.

Актуальность исследования обусловлена необходимостью изучения влияния современных тенденций развития рыночной экономики на интеграцию банковской системы РА в международный кредитный рынок, процесса развития экономических отношений между банками и участниками мировой финансовой системы, процесса интеграции коммерческих банков в международный кредитный рынок.

Объектом исследования является система экономических отношений, возникающая в процессе интеграции банковской системы РА и других участников международного кредитного рынка в этот рынок, а предметом исследования являются интеграционные процессы, происходящие в банковской системе РА, наблюдаемые с точки зрения развития внешнеэкономических связей.

Целью исследования является изучение теоретических и практических вопросов, связанных с интеграцией банковской системы РА в международный кредитный рынок, а также выявление путей интеграции коммерческих банков РА в международный кредитный рынок.

Для достижения поставленной цели в исследовании были выдвинуты и решены следующие задачи:

- Изучить процессы развития банковской системы и выявить существующие формы и способы интеграции в международную банковскую систему;
- Изучить основные тенденции и перспективы развития международной банковской деятельности;
- Изучить и оценить основные тенденции развития банковской системы РА и перспективы развития международных банковских услуг;
- Выявить и проанализировать направления и существующие модели банковской интеграции в международный кредитный рынок;
- Изучить эффективность наличия иностранного капитала в банковской системе РА и выявить степень интегрированности иностранных банков на армянском рынке;
- Изучить способы и методы вхождения иностранных банков в банковские системы стран с развивающейся экономикой и оценить возможности их применимости со стороны коммерческих банков РА.

Результаты исследования имеют теоретическое, методическое и прикладное значение, научная новизна которых заключается в следующих положениях:

- Выявлено воздействие ряда макроэкономических факторов на международную конкурентоспособность коммерческих банков РА, в частности, были оценены взаимосвязи между средней процентной ставкой по кредитам и индексом потребительских цен, средней процентной ставкой по депозитам и ИПЦ, объемом осуществляемых на фондовой бирже РА в течение дня интервенций и величиной валютного курса.
- Разработана и предложена модель оценки эффективности инвестирования иностранного капитала в коммерческих банках, действующих в РА, основывающаяся на параметрах «прибыль-капитал», «прибыль-активы», что выявляет возможности и целесообразность интеграции коммерческих банков Республики Армения.
- Разработаны и предложены новая методика и обобщающий показатель оценки потенциала международной интеграции коммерческого банка, которые основаны на расчете 4-х групп показателей – внутренних количественных, внутренних качественных, внешних количественных и внешних качественных (по величинам оценок каждого из показателей этих групп (среднему арифметическому) рассчитывается обобщающий показатель), и выявляют связь интегрируемых субъектов, а также предоставляют возможность оценивать в динамике и контролировать результаты интеграционных мероприятий банка.

**THE MAIN ISSUES OF THE RA BANKING SYSTEM INTEGRATION TO
THE INTERNATIONAL LOAN MARKET**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 00.08.06 – «International Economics».

The defense of the thesis will take place on April 11th, 2017 at 14⁰⁰ o'clock at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian University: 123 Hovsep Emin str., Yerevan 0051.

ABSTRACT

The strengthening of interaction of the national economies is one of the important characteristics of the contemporary stage of the world economy development, which is also completely shown on the part of financial markets and, being mainly conditioned by the processes of globalization, is accompanied by the integration of financial markets. Integration processes have essential influence especially on the activities of the national banking systems integrated into the international loan market, which is expressed by the deepening of the processes of their integration in the international loan market.

In the RA banking system the Central bank and commercial banks closely cooperate with different international structures and economic entities of other states, and in this context it is necessary to raise all the issues, which are available in cooperation on the local and international levels.

The actuality of the study is conditioned by necessity of investigation of the influence of the contemporary tendencies of the world economy development on the investigation of the RA banking system in the international loan market, the process of development of economic relations between the banks and participants of the world financial system, the process of integration of commercial banks in the international loan market and the tendencies of their development.

The object of the study is the economic relations system, which appears between the RA banking system and other participants of the international loan market during the process of integration into this market, and the subject of the study is the integration processes implemented in the RA banking system being considered from the viewpoint of the development of foreign economic relations.

The purpose of the thesis is to study the theoretical and practical issues connected with the integration of the RA banking system into the international loan market, as well as to expose the ways of integration of the RA commercial banks in the international loan market.

The following tasks have been advanced and solved in the thesis in order to reach to raised purpose:

- To study the processes of the development of the banking system and to expose the forms and ways available during integration in the international banking system;
- To study the main tendencies and prospects of the development of the international banking activities;
- To study and assess the main tendencies of the development of the RA banking system and the prospects of the international banking services development;
- To expose and analyze the directions and available models of banking integration into the international loan market;
- To study the effectiveness of the availability of the foreign capital in the RA banking system and expose the degree of integration of the foreign banks in the Armenian market;
- To investigate the ways and methods of integration of foreign banks in the banking systems of the countries with developing economies and to estimate the possibilities of their application by the RA commercial banks.

The main scientific novelty of the thesis is expressed in the following results:

- The influence of a range of macroeconomic factors on the international competitiveness of the Armenian commercial banks was studied through the assessment of correlation of the average interest rate on loans and consumer price index (CPI), the average interest rates on deposits and CPI, and daily interventions made in the Armenian Stock Exchange and the exchange rate.
- A model for the assessment of profitability of foreign investments in the Armenian commercial banks was developed and recommended, based on profit-capital, profit-assets parameters, which reveals the opportunities and expedience of the integration of the Armenian commercial banks.
- The new methodology and overall index for the assessment of the potential of international integration of commercial banks, based on the assessment of 4 sets of factors, i.e. internal quantitative and internal qualitative, external quantitative and external qualitative factors (the overall index is measured by the assessment of each factor (average)), reveals the correlation of the integrated subjects and allows to assess and control the results of the bank's integration process in dynamics.